

ՀԱՆԳԻՍՏ
Տ. ԳՈՒՐԳԵՆ ՔԱՀԱՆԱ ՀԱՃԵԹՅԱՆԻ
(1890—1985 թթ.)

Սույն թվականի նոյեմբերի 21-ին, ինքնասունհինգ տարեկան հասակում, վախճանվեց Տ. Գուրգեն քահանա Հաճեթյանը:

Հանգուցյալ Տ. Գուրգեն (ավագանի անունով՝ Միհրան) քահանա Հաճեթյանը ծնվել է 1890 թ. Մալաթիա քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է Արաբկիրի Ազգային վարժարանում, ապա շարունակել Մալաթիայի Ազգային վարժարանում:

1903 թ. ընտանյոք տեղափոխվում են Հեքիմյան գյուղաքաղաք, որտեղ սովորում է կոշկակարություն:

1914 թ. ընտանյոք տեղափոխվում են Արաբկիր, ուր և 1920 թ. գավառական ժողովի որոշմամբ և ձեռամբ Տ. Գյուտ եպիսկոպոս Միսիթարյանի ձեռնադրվում է քահանա Խարբերդ քաղաքի Ս. Սարգիս եկեղեցում:

1920—1930 թթ. հովվում է Արաբկիրի Ս. Աստվածածին եկեղեցու հավատացյալ համայնքը:

1924 թ. հանգուցյալը նշանակվում է Արաբկիրի առաջնորդական փոխանորդ:

1930 թ. ընտանյոք տեղափոխվում է Սիրիա. բնակություն հաստատում Հալեպ քաղաքում, ուր և պաշտոնավարում է Ս. Քառասուն Մանկանց եկեղեցում մինչև 1946 թվականը:

1940 թ. ընտրվում է Կրոնական ժողովի անդամ:

1946 թ. ներգաղթում է Մայր Հայրենիք և բնակություն հաստատում քաղաքամայր Երևանում:

1950—1963 թթ. որպես ծիսակատար քահանա աշխատանավարում է Երևանի Ս. Սարգիս և Ս. Հովհաննես եկեղեցիներում:

1963 թ. կոչվում է վաստակած հանգստի:

Հանգուցյալի վերջին օծման և թաղման

կարգը կատարեց արժ. Տ. Արամ ավագ քահանա Բոյաջյանը:

Հանգուցյալը ակնիվ, համեստ, պարտաճանաչ, հավատացյալների կողմից հարգված հոգևորական էր:

Հանգիստ Տ. Գուրգեն քահանա Հաճեթյանի ոսկորներին: